Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐ ԵՎ ՉՎՆԱՍԱՁԵՐԾՎԱԾ ՏԱՐԱՆԵՐ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ

Հոդված 8.2. Վտանգավոր բեռների փոխադրումների բնագավառում Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության լիազորությունները

1. Վտանգավոր բեռների փոխադրումների բնագավառում Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունը՝

1) վտանգավոր բեռների փոխադրումների ժամանակ վտանգավոր բեռ փոխադրողի կողմից գրավոր դիմում ներկայացվելու դեպքում իրականացնում է վտանգավոր բեռի ուղեկցումը անվտանգ երթևեկությունն ապահովելու նպատակով.

2) տալիս է համաձայնություն վտանգավոր բեռներ փոխադրելու երթուղու վերաբերյալ.

3) վտանգավոր բեռների փոխադրման ժամանակ առաջացած վթարների դեպքում իրականացնում է բնակչության և տարածքների պաշտպանությանը, վթարների վերացմանն ուղղված միջոցառումներ.

4) իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

~~**Հոդված 9.**~~ ~~**Վտանգավոր բեռների փոխադրումների բնագավառում Հայաստանի Հանրապետության ոստիկանության լիազորությունները**~~

~~1. Վտանգավոր բեռների փոխադրումների բնագավառում Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը՝~~

~~1) մշակում և իրականացնում է իր բնագավառում պետական քաղաքականությունը.~~

~~2) իր լիազորությունների մասով մշակում է բնագավառը կարգավորող իրավական ակտերի նախագծեր.~~

~~3) հսկողություն է իրականացնում վտանգավոր բեռների փոխադրումների ընթացքում ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման նկատմամբ և ձեռնարկում օրենքով նախատեսված միջոցներ.~~

~~4) վտանգավոր բեռների փոխադրումների ժամանակ վտանգավոր բեռ փոխադրողի կողմից գրավոր դիմում ներկայացվելու դեպքում իրականացնում է վտանգավոր բեռի ուղեկցումը անվտանգ երթևեկությունն ապահովելու նպատակով.~~

~~5) տալիս է համաձայնություն վտանգավոր բեռներ փոխադրելու երթուղու վերաբերյալ.~~

~~6) մասնակցում է վտանգավոր բեռների փոխադրումների ժամանակ առաջացած վթարների վերացման միջոցառումներին.~~

~~7) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:~~

~~**Հոդված 10.**~~ ~~**Վտանգավոր բեռների փոխադրումների բնագավառում Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության լիազորությունները**~~

~~1. Վտանգավոր բեռների փոխադրման բնագավառում Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը՝~~

~~1) մասնակցում է վտանգավոր բեռների փոխադրման անվտանգության ապահովման պետական քաղաքականության իրականացմանը.~~

~~2) իր լիազորությունների մասով մշակում է բնագավառը կարգավորող իրավական ակտերի նախագծեր.~~

~~3) վտանգավոր բեռների փոխադրման ժամանակ առաջացած վթարների դեպքում իրականացնում է բնակչության և տարածքների պաշտպանությանը, վթարների վերացմանն ուղղված միջոցառումներ.~~

~~4) իրականացնում է օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ:~~